

# ՅԱԻՆՈՒԱԾ ՍՓԻՆՔՍԻ

Երկուամբի,  
27 Ապրիլ 1925

## Կացութիւնը Պուկլարիոյ մէջ

**Սօֆիա, 25 (Ռ.)**— Սօֆիայի Բէկվնա թատրոնը ինչպէս նաև քաղաքապետական գրադարանը որ Պուլկարիոյ ամենակարեւոր գրատունն է, հրոյ ճարակ եղան՝ հողագործական — համայնավարներու կողմէ թատրոնին բեմին տակ զետեղուած պօմպաներու պայմաններն հետեւանքով: Զոհ չկայ:

Սօֆիայի մահափորձին մեղսակցութեամբ ամրաստանուած Քասապօֆ Վառնայի մէջ սպաննուեցաւ:

Մայր եկեղեցւոյ մահափորձին մէջ վիրաւորուած գնդապետ Նէյքօֆ՝ այսօր մեռաւ:

Հոռոմ, 23.— «Լա Թրիպիւնա» կը տեղեկանայ թէ իւկօ-Ալավիա բացատրութիւններ պահանջած է այն յայտարարութեանց մասին, ըստ որում՝ Պուլկարիոյ ներքին գործոց նախարարը յայտարարած էր թէ՝ իւկօ-Ալավիա օգնած էր Պուլկարական, յեղափոխական շարժումներուն: իւկօ-Ալավիա կառավարութիւնը սպառնացած է հակառակ պարագային գաղրեցնել դիւնապիտական յարաբերութիւնները Պուլկարիոյ հետ:

ԶԱԽԹՈՒԿՈՓ ՊԱՆՆՈՒԻԾԾ ԱՍՏԻԿԱՆՈՒԹԵԱԾՆ, ԿՈՂՄԵՒ

**Սօֆիա, 23 (Հ.)**— Աստիկանութիւնը սպաննեց Մինքօֆի զիսւոր օգնական՝ Զուաթուլօֆի:

Հոռոմ.— Պուրկազի մէջ կոյս մը տեղի ունեցաւ ոստիկանութեան և քօմիւնիսներու միջեւ որոնց երկու քը սպաննուեցան և շատերը վիրաւորուեցան Վառնայի մէջ ոստիկանութիւնը զտաւ քօմիւնիստ պետերէն Քաօալօֆի տունը, որ հրկիզուեցաւ և քօմիւնիսան ալ սպաննուեցաւ:

Սօֆիա.— Գործօն բանակէն երիտասարդ սպայ մը դաշունահար եղաւ: Սպաննիջները անոր մարմույն մէջ թուղթ մը գետեղած էին սա իմաստով: Մահ դաւաճաններուն:

— Քօմիւնիսթ յրագրող Մանէֆ սպաննուեցաւ:

— Սօֆիայի հրամանատարը յայտարարութեամբ մը կ'սպառնայ հրացանագարկ ընել հանրային անդորրութիւնը վրդովողները:

— Երքակօ Թրիպիւն կը ծանուցանէ որ, Սօֆիայի մէջ հարիւրէ աւելի մասսպատիժներ պիտի գործադրուին:

Սօֆիա— Կը հաշուի որ երկու հարիւր միլիոն լէջայի պէտք պիտի ըլլայ՝ Մայր Եկեղեցին նորողելու և օգնելու սպաննուածներու եւ վիրաւորեաներու ընտառիքներուն:

## Մարէշալ Հինտէնպուրի նախագահ Գերմանիոյ

Պէրլին— Գերման հանրապետութեան եախաղան ընտրուեցաւ մարածախտ Հինտէնպուրկ՝ 11,306,000 ձայնով:

Փորբուկալի Հանր. Նախագային նրածարումը

Լիզուոն 24 (Ռ) — Հանրապետութեան նախադահ իր հրաժարականը ներկայացուց:

Պեսարապիոյ Հարցը

Քօմիւնիսկ 24 (Հ) — Մոսկուային կը ծանուցանին թէ քառասուն Սովիէթական գորարաժիններ կեղրոնացած են Ռումանական ահմանագլուխներուն վրայ: Ռուսական համախմբութիւն կ'ըլլան Լինական սահմանագլխին վրայ եւս:

Նախարարական տագնաապ Պէնիգայի մէջ

Պրիւքսէլ, 24 (Ռ) — Մր. Վան տէր Վէլտ Հալորդեց թագաւորին թէ՝ ինք կարող չէ դահլիճը կազմուի:

Նիւ-Եօրք— 24 (Ռ) Անգլիական ուկին 4 տոլար 80 5)8 սէնդի բարձրացաւ: Սակագին մը որ 1915էն իսկեր արձանագրուած չէր Զրոյց կը Միջ թէ այս բարձրացումը հետեւանը է Անկու-Ամերիկեան գրամատէներու միջև գոյացած համաձայնութեան մը:

Լոնտոն— Արտակարդ միջոցներ ձեռք առնուեցան ուէ պօլչէվիք շարժում խեղզելու համար Լորտ Ռավլինսոնի յուղարկաւորութեան առթիւ ոստիկանութիւնը խոտիւ: զննեց Եկեղեցին բոլոր մասերը:

## ՄԵԾ ՀՐԴԵԼ ՇԱՖԱՐԻ ԳՈՐԾԱՏԱՆ ՄԸ ՄԷՋ

Առջի օր Հավամտիայի մէջ մեծ հրդեէ մը ծագեցաւ մթերանոցի մը մէջ որ կը պատկանի Եգիպտոսի Շաքարագործական ընկերութեան:

Կրակը առտուն կանուխ ծագած է, բայց, ուշ ատեն նշմարուէր է: Խակոյն, հրշէջ գործիքներ խրկուեցան տեղույն վրայ, մինչ Գահիրէն ինքնաշարժ նաւակներ կը խրկուէին օգնելու աղէտին զսպումին աշխատութեանց:

Բարեբաղտաբար, գործարանը չը վնասուեցաւ. կրակը լսկ փճացուց մթերանոցը ուր արտածելիք ապրանքներ կային: Վնասները 230,000 ոսկի հաշուին:

## ՀԱՅՈՒԹԻՒՆ ՎՈՐՈՒՄԸ

গুরু পদ্মালী মন্ত্ৰ গুৱাহাটী